Հետազոտական աշխատանք

Հեքիաթի տեղն ու դերը տարրական կրթության համակարգում

Թիվ 158 դպրոցի դասվար՝ Ա. Բեկնազարյան

Ղեկավար՝ Ե. Ջիլավյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3
Հեքիաթը որպես գեղարվեստական ստեղծագործություն և կրթության արդյունավետ միջոց ……6
Հեքիաթի կրթադաստիարակչական արժեքը և ուսուցումը տարրական դասարաններում……11
Եզրակացություն……21
Օգտագործած գրականություն ……23

Ներածություն

Հեքիաթն ակտիվ գեղագիտական ստեղծագործություն է, որը կլանում է երեխայի հոգեկան կյանքի բոլոր ոլորտները՝ նրա միտքը, զգացմունքները, երևակայությունը, կամքը…

Հեքիաթը չունի հստակ տարածք, հստակ հասցեատեր, չի պատկանում ոչ մի սոցիալական և տարիքային խմբի: Այն դուրս է առօրյա ժամանակային («Լինում է, չի լինում…») և տարածական չափումներից, խզված են բուն իրականության և հեքիաթի «իրականության» պատճառահետևանքային կապերը: Ինչպես իրավացիորեն նշում է Ի. Վաչկովը՝ հեքիաթը դառնում է հանդիպման միջոց և՛ երեխաների , և՛ մեծահասակների համար դեռևս չգիտակցված իրենց սեփական «ես»-ի և աշխարհի հետ:

Հասկանալի է, որ հեքիաթներում արտացոլված են ժողովրդի աշխարհայացքի, մտածողության և հոգեբանության ոչ միայն ուժեղ և առաջավոր կողմերը, այլև պատմականորեն անխուսափելի թույլ և հետամնաց կողմերը:

<u>Թեմայի արդիականությունը</u>: Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական, ժողովրդավարական և ինքնաճանաչողական կարողունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի ու վարվելակերպի ձևավորումը: Անվիճելի նշանակություն ունեն այս գործընթացում հեքիաթները: Ինչպես իրավացիորեն նշել է Ղ. Աղայանը՝ հեքիաթը նման է մայրական կաթի. ինքը գնում է, իսկ արդյունքը մնում է: Թեման արդիական է բոլոր դարաշրջանների համար, քանի որ հեքիաթի շնորհիվ սովորողները կարողանում են տարբերել բարին չարից, կարելին անկարելիից, իրականը երևակայականից, սովորում են լինել հոգատար միմյանց և մեծերի նկատմամբ, դատապարտել սուտը, կեղծիքը, հասկանում են, որ կարևորը ոչ թե նյութականն է, հարստությունը, փառքը, ուժը, այլ գիտելիքը, քանի որ դա մեծ ուժ է: Հեքիաթի միջոցով զարգանում է սովորողների քննադատական մտածողությունը, վերլուծական կարողունակությունները, արտահայտիչ ընթերցելու կարողությունը, ինչու չէ՝ նաև սկսում են գնահատել աշխատանքը, արհեստը: Արդի դպրոցը դիմում է մեդիա հարթակների օգնությանը

հեքիաթն առավել հասկանալի և հետաքրքիր դարձնելու համար, քանի որ այսօրվա սերունդը ձգտում է շատ ժամանակ անցկացնել այդ հարթակներում:

Համաձայն Բոլոնյայի հռչակագրի՝ երեխաները դպրոց են հաճախում 5.5-6 տարեկանից: Կրթական համակարգի անցումը 12-ամյա ուսուցման, բնականաբար, որոշակի խնդիրներ է առաջացնում տարրական կրության համակարգում:

Ի՞նչ դժվարություններ են առկա, ի՞նչ դեր ու նշանակություն ունեն տարրական դասարանների դասագրքերում տեղ գտած հեքիաթներն ու բնագրերը: Արդյոք կարելի՞ է 5.5-6 տարեկան երեխաներին կտրել մանկապարտեզից և տանել դպրոց:

<u>Հետազոտման նպատակներն ու խնդիրները:</u> Հետազոտման նպատակն է՝ փնտրել նոր ուղիներ ու մեթոդներ այս տարիքի երեխաների ուսումնական գործունեությունն առավել կազմակերպված ու արդյունավետ դարձնելու համար: Հետազոտման խնդիրն է՝ պարզել, թե ինչ տեղ ու դեր ունեն հեքիաթները տարրական կրթության համակարգում: Առհասարակ, այս տարիքի երեխաները հաճախ ի վիճակի չեն ընկալել ուսուցչի կողմից մատուցվող նյութը: Լավ կլիներ, որ այդ տարիքի երեխաները մանկապարտեզ գնային, այնտեղ ստանային համապատասխան հմտություն և կարողունակություն, մանավանդ որ դպրոցների մեծ մասում չկան այն բարեկեցիկ պայմանները (նկատի ունեմ խաղերի, հանգստի, նաև՝ քնելու պայմանները), որով ապահովված են եվրոպական այն երկրները, որոնցից մենք ընդօրինակել ենք նման կրթահամակարգը: Նույնիսկ արձակուրդից արձակուրդ նկատելի է, որ երեխաներն օր օրի աճում են, արձանագրում ենք գիտակցության աճ: Մենք՝ ուսուցիչներս, համոզված ենք, որ սովորողների թիվը դասարանում մեծ չպետք է լինի, որով էլ մեծապես պայմանավորված է արդյունավետ ուսուցումը:

<u>Հետազոտման օբյեկտը:</u> Հետազոտման օբյեկտ է հանդիսացել ազգային հերոս Մովսես Գորգիսյանի անվան թիվ 158 հիմնական դպրոցի տարրական դասարանների սովորողները և այն դասագրքերը, որոնցով դասավանդվում են այդ դպրոցի տարրական դասարաններում:

<u>Հետազոտման մեթոդոլոգիական հիմքը:</u> Հետազոտման մեթոդոլոգիական հիմք են հանդիսացել մանկավարժների, հոգեբանների՝ տարրական կրթության համակարգում հեքիաթների դասավանդմանը, տեղին, դերին ու նշանակությանը նվիրված աշխատանքները,

հետազոտությունները, գրքերը, մեթոդական ուղեցույցներն ու ձեռնարկները, հոդվածները և այլն։

Աշխատանքի կառուցվածք և ծավալը։ Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու վերնագրերից, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից։

Հեքիաթը որպես գեղարվեստական ստեղծագործություն և կրթության արդյունավետ միջոց

Ամենամեծ ստեղծագործողը ժողովուրդն է,
իսկ նրա ամենամեծ ստեղծագործությունը՝ հեքիաթը։
Հովհաննես Թումանյան

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ժանրերից է։ Հեքիաթի ոճական գլխավոր առանձնահատկությունը, որը հատուկ է միայն հեքիաթին, յուրօրինակ սկիզբն է՝ «Լինում է, չի լինում…», «Եղել է, չի եղել…», «Կար-չկար…», «Ժուկով-ժամանակով…» և այլն։

Հայ ժողովրդական հեքիաթները աշխարհի մյուս բոլոր ժողովուրդների հեքիաթների նման իրենց նկարագրով և իրականության արտացոլման եղանակներով միասեռ չեն։ Նրանք բաժանվում են հիմնականում երեք տեսակի՝ կենդանական, հրաշապատում, իրապատում կամ կենցաղային։

Կենդանական հեքիաթները գալիս են վաղնջական ժամանակներից։ Դրանք ժողովրդի մանկության շրջանի ստեղծագործություններն են, որոնց համար բնորոշը բնության երևույթների ու կենդանիների անձնավորումն է։ Իրականության ընկալման ու վերարտադրման այս եղանակը սիրով ընդունվում է ամենից առաջ մանուկների կողմից, բավարարություն է տալիս նրանց պայծառ երևակայությանն ու ձգտումներին, որի պատճառով էլ նրանք կոչվում են նաև մանկական հեքիաթներ։

Հայկական մանկական հեքիաթների գործող անձինք, աշխարհի մյուս բոլոր մանկական հեքիաթների գործող անձանց նման, կենդանիներն են, գազանները, սողունները, թռչունները։ Նրանց հիմնական հատկանիշը մարդկանց լեզվով խոսելն է, մարդու նման դատելն ու գործելը։ Հանգամանքների բերումով նրանք մերթ զայրանում են, մերթ՝ հանդարտվում, ատում, սիրում, տխրում ու ուրախանում։ Նրանք վրիժառու են, բայց, միաժամանակ, գիտեն լավություն անել և իրենց անձը զոհելու գնով ծառայել բարի մարդկանց։

Ծագումով ու կազմավորմամբ համեմատաբար հին են հրաշապատում հեքիաթները։ Այս հեքիաթներում ամեն ինչ (սկսած մարդ-հերոսներից, վերջացրած նրանց օգնող կենդանիներով, առարկաներով, բնության երևույթներով, մարդուն թշնամի գազաններով, իրադարձություններով ու հանգամանքներով) գերբնական են, հրաշքային։ Հենց այդ էլ նրանց ծագումը տանում է ամենահեռավոր ժամանակները, երբ մարդը դեռևս գերի էր բնությանը և դա հասկանալով՝ ձգտում էր ազատագրվել նրանից։

Իրապատում կամ կենցաղային հեքիաթները հասարակական կյանքը, մարդկային, դասային ու դասակարգային փոխհարաբերություններն արտացոլում են առավել իրական, առավել ռեալիստական գույներով։ Հրաշապատում հեքիաթների հիմքում ընկած ֆանտաստիկ հնարանքն այստեղ իսպառ բացակայում է։ Այս հեքիաթները աչքի են ընկնում գործողությունների արագ և նպատակասլաց զարգացմամբ և գեղարվեստական մեծ ընդհանրացումների ուժերով։ Իրապատում հեքիաթների հիմնական թեմաներն են հերոսի ամուսնությունը, ամուսնական հավատարմությունն ու անհավատարմությունը, ծույլ և անաշխատ տղամարդկանց հեգնական կերպարի պատկերումը, խելքի և իմաստության գովասանքը, աշխատանքի և արհեստի գովքը, բախտն ու ճակատագիրը, արդարությունն ու անարդարությունը, ճնշողի և ճնշվողի փոխհարաբերությունները, կրոնավորների և կրոնի խիստ քննադատությունը և այլն։

Վ. Հարությունյանը, գերագնահատելով հեքիաթի դաստիարակչական նշանակությունը, այն անվանել է «ամենատաղանդավոր մանկավարժ»՝ ասելով, որ ամենատաղանդավոր մանկավարժի ՝ ժողովրդի հեքիաթը՝ մանկավարժական այդ երախայրիքը, սերունդների անփոխարինելի դասագիրքն է դառնում հազարամյակներ շարունակ։ Միայն հետագայում, երբ մարդկությունը ստեղծում է գիրն ու գրականությունը, երբ հասարակությունը շերտավորվում է, ստեղծվում է հասարակության կողմից վերահսկվող դպրոց, բանահյուսության դերը որոշ չափով նվազում է և դադարում դաստիարակչական հիմնական միջոց լինելուց։

Այսպիսով, հնում՝ մինչ դպրոցների հիմնվելը, հեքիաթը եղել է թե՛ բարոյական, թե՛ մտավոր դաստիարակության գլխավոր միջոցը, այսինքն, որ գրեթե նույնն է, ինչ ասել ուսուցման արդյունավետ միջոց։ Դարեր շարունակ հեքիաթը որպես ուսուցման և

դաստիարակության ամենակարևոր միջոց, իր ուրույն և պատվավոր տեղն է զբաղեցրել։ Դասագրքերի հայտնվելուն պես հեքիաթների ուսուցողական նշանակությունը մի փոքր խամրել է, որոշ ժամանակ կրթօջախներում համեստորեն լռել է և չի գործել։ Սակայն այժմ՝ մեր օրերում, հեքիաթը նորից իր գլուխն է բարձրացրել և փորձում է օգնության հասնել փոքրիկներին իրենց այդ «բազմաչարչար», «սև ու սպիտակ» աշխատանքը գունավորելով։ Եվ վերջապես, հեքիաթը նույնպես փորձում է բացատրել բոլորին, որ այն տեսական նյութը, որը մատուցվում է, երեխաները չեն մարսի, մինչև որ վերջինս չկերպարանավորվի, չշնչավորվի և ավելի «դյուրամարս» չդառնա։

Հեքիաթի համար կարևոր հատկանիշ է նաև բնական ուժերի և կենդանիների անձնավորումը։ Երեխաների համար արտաքին աշխարհի չափանիշներն իրենք են։ Նրանց համար տարօրինակ է, թե ինչու իրենք խոսում են, իսկ կենդանիներն ու բույսերը չեն խոսում, և միանգամայն հավանական են համարում նրանց խոսելու կարողությունը։

Մենք գիտենք, որ հեքիաթներն իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն սովորողի դաստիարակության գործընթացում։ Դաստիարակությունն ավագ սերնդի կողմից մարդկային փորձի փոխանցումն է մատաղ սերնդին։ Իսկ այդ փորձը հենց անյպես չի փոխանցվում, այլ մատուցվում է տարբեր ճանապարհներով։ Ըստ այդմ, ուսուցման լավագույն և արդյունավետ միջոցներ կարող ենք համարել նաև հեքիաթները՝ հոգեբանական, դիդակտիկական, հոգեբանատրամաբանական, հոգեբանաթերապևտիկ և այլն, որոնք թույլ կտան կրթել սովորողին՝ այդ գործընթացը դարձնելով ավելի հետաքրքիր և սպասված, ինչպես նաև կօգնեն ճանաչել իր սեփական ներաշխարհը, բարձր արժեքների վրա պահել իր անձը և «ես»-ը։

Իմ երևակայությունից ծնված հեքիաթներում էլ կենդանիները, բույսերը, երկնային մարմինները շնչավորվել են և իրենց հեղինակավոր խոսքերն են ունեցել։ Օրինակ՝ որպեսզի սովորողներին նույն ձանձրալի ու խրատական ոճով չասեի, որ չի կարելի ծառերը հատել, պետք է պահպանել բնությունը, ես այդ գաղափարի շուրջ խոսել եմ 8-10ր՝ միաժամանակ ուսուցանելով «7» թիվը։ Զրույցս սովորողների հետ հետևյալն է.

-Երեխանե՛ր, ի՞նչ գիտենք բնության, ծառերի, օդի մասին։ Գիտենք, որ ծառերը, թփերը, ծաղիկները բնության մի մասնիկ են, պետք է խնամքով օգտվել բնությունից։ Գիտե՞ք՝ եթե

ծառերը չլինեն, մենք թթվածնով հարուստ օդ չենք ունենա: Ուրեմն՝ չի կարելի ծառերի ճյուղերը կոտրատել, վնասել, կտրել, քանի որ նրանց շնորհիվ է, որ մենք մաքուր օդ ենք շնչում: Իսկ հիմա պատմեմ մի հեքիաթ փայտահատի և քաջ ծառի մասին:

Գարնանային պայծառ օր էր: Անտառում լսվում էին թռչունների ուրախ դայլայլը, առվակի կարկաչուն ձայնը: Անտառի գրեթե կենտրոնում վեր էր խոյացել մի շա՜տ գեղեցիկ բարդի՝ մեծ ու հիասքանչ սաղարթով: Նա հպարտ կանգնած էր և իր շուրջն էր դիտում: Հպարտ էր, որովհետև գիտեր, որ անգնահատելի աշխատանք էր կատարում. նա բոլորին թթվածին էր տալիս: Հանկարծ լսվեցին մեկի շտապող ոտնաձայները: Ո՞վ էր. փայտահա՜տը: Նա, կացինը ուսին դրած, մոտեցավ հենց այդ ծառ: Օ՜, ո՛չ: Մի՞թե նա պետք է կտրեր այդ բարի ծառը: Ի՞նչ անել…Այս մտքերն արագ անցնում էին խեղճ ծառի գլխով: «Վե՛րջ, ես կխոսեմ նրա հետ և կհամոզեմ նրան, որ չկտրի ինձ, կբացատրեմ նրան իմ կարևորությունը»,- մտածեց ծառը: Եվ ահա, փայտահատը նշան բռնեց, որ ուժգին հարվածի ծառի բնին և տապալի այն:

-Սպասի՛ր,- ասաց ծառը,-այդ ի՞նչ ես ուզում անել:

Փայտահատը անասելի շփոթված ու վախեցած հայացքով նայեց վեր և տեսավ, որ իր հետ խոսողը հենց ծառն է: «Իսկապես, ծառն է ինձ հետ խոսողը,- մտածեց նա:

-Ես ուզում եմ քեզ կտրել,- ասաց նա:

-Մի՛ արա դա: Ես իմ ոտքի վրա կանգնած քեզ ավելի շատ եմ պետք, քան կտրված:

-Դու չես կարող ինձ խանգարել, դու ընդամենը մի ծառ ես և չես կարող պաշտպանվել ինձնից ու իմ սուր կացնին

-Դա դեռ կտեսնենք,- ասում է ծառն ու հանում իր սուրը, որպեսզի պաշտպանվի նրանից:

Փայտահատն ու ծառը երկար սուսերամարտում են: Հաղթում է ծառը, իսկ փայտահատը վախեցած փախչում է՝ ծառի ձեռքում թողնելով իր կացինը: Ծառը ուրախությունից իր ճյուղերը վեր բարձրացրեց, շա՜տ վեր և ժպտաց՝ հիանալով իր մեծ հաղթանակով:

-Երեխանե՛ր, պատկերացրեք այդ տեսարանը: Կացինը նման է այսօրվա մեր հյուրին՝ մաթեմատիկայի զարմանհրաշ աշխարհից մեզ հյուր եկած թվին՝ 7-ին: Այն շատ գեղեցիկ է, չէ՛:

Այսպես, իմ այս հեքիաթով ու զրույցով և՛ ուսանեցի 7 թիվը, և՛ խոսեցի ծառերի կատարած անգնահատելի աշխատանքի մասին:

Հեքիաթները պետք է դասել *հոգեբանական սնունդի* շարքին, որը երեխան պետք է ընդունի իր զարգացման որոշ շրջանում: Իրականության և հրաշալիքի այդ խառնուրդը

համապատասխանում է մանկական բնական պահանջին, զարգացնում և շատացնում է նրա հասկացությունների պաշարը; Նա անգիտակցաբար խելք է սովորում այդ գունագեղ պատկերներից։

Հեքիաթի կրթադաստիարակչական արժեքը և ուսուցումը տարրական դասարաններում

Հեքիաթը նման է մայրական կաթի.

ինքը գնում է, իսկ արդյունքը մնում է։

Ղազարոս Աղայան

Մանկական գրականությունը (հատկապես հեքիաթը) մեր՝ մանկավարժներիս դաշնակիցն է, փոքրիկի դաստիարակն ու խորհրդատուն։ Այն նպաստում է երեխայի աշխարհայացքի հիմքերի ձևավորմանը, բնավորության կազմավորմանը, հարստացնում նրա նախնական գիտելիքները, բառապաշարը, կենսափորձը, հղկում նրա գեղագիտական ճաշակն ու կոփում կամքը։ Անփոխարինելի է հեքիաթների դերը կրտսեր դպրոցական տարիքի երեխաների լեզվամտախոհության, ստեղծագործական երևակայության զարգացման առումով։ Մանկական ստեղծագործություն ընտրելիս անպայման անհրաժեշտ է հաշվի առնել դրանց գրական-գեղարվեստական արժանիքներն ու առանձնահատկությունները։ Միայն այս դեպքում տվյալ ստեղծագործությունը երեխայի համար կդառնա ուժեղ ու կայուն ներշնչման աղբյուր։

Ուսումնասիրություններից պարզվել է, որ շատ դաստիարակներ, ուսուցիչներ դժգոհում են, որ երեխաներն այնքան էլ չեն սիրում հեքիաթներ լսել։ Մերօրյա երեխաներին ավելի շատ հետաքրքրում է համակարգիչը, տեխնիկան։ Այսօրվա սերունդն էապես տարբերվում է նախորդներից։ Հետևաբար՝ ինչ-որ բան պետք է փոխել ուսուցման մատուցման մեջ։

Հեքիաթը լավագույն միջոց է անձնային որակների ձևավորման և զարգացման համար նաև ուսուցման գործընթացում։ Չնայած բոլոր հեքիաթներն իրենց կշռույթն ու ազդեցությունն ունեն անձնային որակների ձևավորման հարցում, սակայն առավել հատկանշական են հոգեբանական հեքիաթները։

Ես իմ աշակերտների համար կարդացի Հովհաննես Թումանյանի «Ճանփորդները» հեքիաթը։ Երբ զգացի, որ այն դրական ազդեցություն է թողնում նաև սովորողների զարգացման (ստեղծագործական, երևակայական, պատկերային…) վրա, առաջարկեցի, որ իրենք էլ պատկերեն, ստանան իրենց երևակայությունից ծնված հեքիաթի տեսարանը (այդ նույն հեքիաթի)։ Հաջորդ օրը յուրաքանչյուրը բերում էր իր ստացած գեղեցիկ նկարը և ուշադիր նայելով աչքերիս մեջ՝ սպասում, որ գնահատեմ իրենց։ Նրանց բոլորի աշխատանքները ամրացրի պատին, որպեսզի բոլորը տեսնեին և կարծիքներ հայտնեին իրենց ընկերների աշխատանքների վերաբերյալ։ Այդ ամենը մեծ ուրախություն էր մտցրել դասարանում, և բոլորը սպասում էին հաջորդ հեքիաթին։ Դրանով ես ավելի համոզվեցի հեքիաթի կարևորության աստիճանը կրտսեր դպրոցականների կյանքում։

Յուրահատուկ է հեքիաթ հորինելու, ներկայացնելու գործընթացը։ Այն ավելի խորը իմաստ ունի. ձևավորում է հարգանք միմյանց աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև՝ լսելու, վերլուծելու, քննարկելու, եզրահանգումներ կատարելու կարողություններ։ Այսինքն՝ այն որ յուրաքանչյուրն իր ընկերոջ աշխատանքին հարգանքով է վերաբերվում, նշանակում է արդեն «ընկերասիրության սաղմեր» կան։ Հեքիաթը պատմելիս նույնիսկ ամենաամոթխածները դառնում են համարձակ ու վճռական։ Նրանք հեքիաթի միջոցով, հեքիաթի հերոսին վերագրելով իրենց վախն ու ամաչկոտությունը, փորձում են ինքնահաստատվել։ Չնայած խոսում են վախվորած ու ամաչելով, սակայն այնպես են ներկայացնում, որ իբր հերոսը կամ հերոսուհին է այդպիսին։

Սուխոմլինսկին ևս, ուշադրություն դարձնելով այս հանգամանքին, նկատել է, որ այն երեխաները, որոնց խոսքն այլ պայմաններում անկապ էր ու կցկտուր և խոսքի ու մտածողության զարգացման մեջ նա դժվարությունների է հանդիպել, հեքիաթ պատմելիս եղել է սահուն և արտահայտիչ։ Նա գտնում է, որ եթե երեխան իր երևակայության մեջ կապում է շրջապատող աշխարհի մի քանի առարկաներ, նշանակում է սկսել է մտածել։

Եթե չլիներ ստեղծագործելը, եթե չստեղծվեին հեքիաթներ, իմ կարծիքով, շատ երեխաների խոսքը կցկտուր և խառնաշփոթ կլիներ, իսկ մտածողությունը՝ քաոսային։ Այդ

պատճառով էլ մենք՝ մանկավարժներս, շատ մեծ կարևորություն ենք տալիս պատմածքների, հեքիաթների միջոցով մանուկների ներաշխարհի ու բանավոր խոսքի զարգացմանը։

Երեխան մեծ ուշադրություն է դարձնում պատմողի դիմախաղերի, ձայնի երանգի, շարժուձևի վրա, որն էլ ավելի համոզիչ ու տպավորիչ է դարձնում հեքիաթը և ոչ վերացական։

Ես կարծում եմ, որ հեքիաթը, հանդիսանալով ինքնաճանաչման լավագույն միջոց, մեծ հնարավորություններ կարող է տալ նաև ուսուցիչներին՝ իրենց աշակերտների բնավորության բազմաթիվ գծեր բացահայտելու կամ իրենց աշակերտներին ճանաչելու համար։

Օրինակ՝ երբ ուսուցչուհին ինչ-որ անավարտ հեքիաթ է առաջարկում, որը պետք է երեխաներն ավարտեն, այսինքն՝ որոշեն հերոսների հետագա անելիքները, հանգուցալուծում տան հեքիաթին։ Ըստ նրանց առաջարկած ավարտի տարբերակի՝ ուսուցչուհին կարող է բացահայտել սովորողների բնավորության մի շարք նոր չբացահայտված գծեր։

Դրանում ես համոզվել եմ իմ մանկավարժական գործունեության ընթացքում։ Նախօրոք պատրաստել էի քարտեր, որտեղ առաջարկել էի անավարտ հեքիաթներ։ Երեխաները պետք է շարունակեին և ավարտեին հեքիաթը։ Ներկայացնում եմ հեքիաթի օրինակներ, որոնք ավարտին են հասցրել սովորողները։

<u>Կախարդական ծառը</u>

Այգու ծայրին մի ծառ էր աճում։ Արևը ջերմացնում էր նրան, քամին մեղմորեն շոյում էր ճյուղերը, իսկ տերևները կարծես շշնջում էին՝ ցանկացի՞ր…ցանկացի՞ր…

Դա հրաշք ծառ էր։ Ով կանգներ ծառի տակ և որևէ բան ցանկանար, մտածածը կիրագործվեր. . .

Ոչ ոք չգիտեր, որ այդ ծառը կախարդական էր։ Մի օր ես գնացի, կանգնեցի այդ ծառի տակ և չգիտես ինչու երազանք պահեցի, որ վաղը անձրև գա, չնայած որ շոգ ամառ էր։ Հաջորդ օրը անձրև եկավ, և ես հասկացա, որ այդ ծառը կախարդական է։ Դասեից հետո շուտ վազեցի այդ ծառի մոտ և մտքումս երազանք պահեցի. «Ես ցանկանում եմ, որ իմ հայրիկը հարստանա

և շատ փող ունենա, ու որ շուտ հետ գա Մոսկվայից, էլ չաշխատի և միշտ մեզ հետ ապրի Երևանում: Խնդրում եմ, թող այդպես լինի, շա՜տ եմ խնդրում էլի»: Հաջորդ օրը հայրիկս զանգեց մայրիկիս և ասաց, որ ընդմիշտ վերադառնում է Հայաստան, քանի որ արդեն շատ փող է աշխատել, որ արդեն միշտ տանն է լինելու: Ես, մայրիկս ու քույրիկս շատ ուրախացանք: Ես անմիջապես վազեցի այգի և շնորհակալություն հայտնեցի ծառին, որ կատարել էր իմ երազանքը:

Մ. Գորգիսյանի անվ. թիվ 158 հիմն. դպրոց, Մարտիրոսյան Ռաֆֆի, IIբ դաս.

<u>Կախարդական ծառը</u>

Այգու ծայրին մի ծառ էր աճում: Արևը ջերմացնում էր նրան, քամին մեղմորեն շոյում էր ճյուղերը, իսկ տերևները կարծես շշնջում էին՝ ցանկացի՜ր…ցանկացի՜ր…

Դա հրաշք ծառ էր: Ով կանգներ ծառի տակ և որևէ բան ցանկանար, մտածածը կիրագործվեր. . .

Մի օր ես կանգնեցի այդ ծառի տակ և երազանք պահեցի: Իմ երազանքը իրականացավ: Ես շատ-շատ ուրախացա և մայրիկիս պատմեցի այդ մասին: Մայրիկս շատ ուրախ էր: Մենք գնացինք այդ հրաշք թագավորություն և այնտեղ ապրեցինք: Երբ իմ մայրիկին ասացի, որ դա կախարդական ծառ է, նա շատ ուրախացավ ու փորձեց իմ ասածը: Նա գնաց և այդ ծառի տակ մի երազանք պահեց. իմ մայրիկը երազում էր թագուհի դառնալ: Եվ նա դարձավ թագուհի, իսկ ես՝ թագավոր: Դրանից հետո ես ամեն օր ջրում էի այդ կախարդական ծառը

Մ. Գորգիսյանի անվ. թիվ 158 հիմն. դպրոց, Գրիգորյան Հայկ, IIբ դաս.

Ինձ համար պարզ դարձավ, թե սովորողներից ով ինչպես է մտածում. մտածում է՝ ելնելով իր ներքին աշխարհից: Ես, փաստորեն, ծանոթացա նրանց ներքին աշխարհի հետ, պարզեցի, թե նրանցից ով է երազկոտ, գթասիրտ, առատաձեռն, ճշտապահ, խորամանկ, ագրեսիվ, ով տանը խնդիրներ ունի և այլն: Հատկապես ինձ համար հետաքրքիր էր Մ. Ռաֆֆիի շարունակած հեքիաթը, որտեղ ծառից նա խնդրում էր, որ իր հայրիկը շուտ գա արտերկրից, քանի որ ինքը նրան շատ է կարոտել: Ակնհայտ է, որ այս երեխան շատ է սիրում իր հայրիկին և

շատ է զգում նրա կարիքը։ Նա նաև գիտակցում է, որ իր հայրիկը այնտեղ է գումար աշխատելու համար, որ ամեն Նոր տարի պետք է գա և մի մեծ ու գեղեցիկ խաղալիք նվիրի իրեն։ Միաժամանակ Ռաֆֆին ուզում է իր հոր կողքին լինել, ուզում է զգալ հոր սերն ու լինել նրա պաշտպանության ներքո։

Տարրական դասարաններում գլխավորապես հանձնարարվում են կենդանական ու իրապատում հեքիաթները, իսկ հրաշապատում հեքիաթները, որպես կանոն, այդ տարիքի երեխաներին խորհուրդ չի տրվում կարդալու։ Կենդանական հեքիաթներից են «Ճամփորդները» (1-ին դասարան՝ Լ. Տեր-Գրիգորյան), «Երեք արջի հեքիաթը», «Պոչատ աղվեսը» (2-րդ դասարան՝ Վ. Ա. Սարգսյան) և այլն։ Կենդանական հեքիաթներից հետագայում առաջացել են առակները, որոնցում նույնպես գործող հերոսները հիմնականում կենդանիներն են։

Իրապատում հեքիաթներն ըստ թեմատիկայի լինում են կենցաղային, սոցիալական, հերոսական և այլն։ Այս թեմաներով գրված հեքիաթների հիմքում միշտ էլ մարդկային կյանքն է՝ իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով։

Հեքիաթների ուսումնասիրությունը տարրական դասարաններում վաղուց ի վեր ընդունված է, և ամեն մի փորձ դրանք դասագրքերից հանելու կամ կրճատելու ուղղությամբ , դատապարտված է ձախողման։

Ինչպես Ուշինսկին է նկատել, հեքիաթներում առկա կյանքով ու հետաքրքրություններով լի անընդհատ շարժումը միահյուսվում է պատմելաձևի պարզության ու հաճախակի հանդիպող կրկնությունների հետ և ստեղծում մի ներդաշնակ ամբողջություն, որն իր բոլոր գեղեցիկ մանրամասնություններով, ժողովրդական բառերով, դարձվածքներով ու լեզվամտածողությամբ հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ։

«Հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին,- ասում է Ղ. Աղայանը։- Հեքիաթը մեր երևակայության, մեր տաղանդի ու հանճարի կաթն է։ Այդ կաթը ինչպես սննդարար է եղել մեզանից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և քառասուն դար մեզանից հետո»։ Հենց դա է պատճառը, որ Ուշինսկին այնպես վստահորեն պնդում էր, թե ժողովրդական հեքիաթները պաշտոնական գրականության

կողմից մանուկների համար գրված բոլոր տեսակի պատմվածքներից ավելի բարձր կարելի է դասել։

Հեքիաթներում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միախառնված վիճակում, և դա նրանց ժանրային հիմնական առանձնահատկություններից մեկն է։ Դասավանդման ընթացքում հեքիաթների ուսումնասիրությունն այնպես պետք է տանել, որ դրանք թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛ առանձին-առանձին հասնեն սովորողների գիտակցությանը։

Տարրական դասարաններում հեքիաթներն ամենից առաջ պետք է ավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝ նախապատրաստական զրույցի միջոցով նպաստել դրանց ճիշտ ընկալմանը, ամբողջ նյութի արտահայտիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը, սովորեցնել լավ կարդալ, անծանոթ բառերն ու մտքերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործաբար վերարտադրել, գործող անձանց ու նրանց կատարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ սովորողներին հաղորդած տեղեկությունները և այլն։ Երբ հեքիաթի տեքստը այսպես բազմակողմանիորեն մշակված ու յուրացված կլինի, այն ժամանակ միայն կարելի կլինի անցնել հեքիաթի երևակայական կողմի բացահայտմանը։ Այսպես, օրինակ՝ կարելի է աշակերտներին բացատրել, որ «Երեք արջի հեքիաթը» հեքիաթում աղջկա անտառ գնալը, անտառում մոլորվելը և արջի որջն ընկնելը միանգամայն հնարավոր ու իրական է, իսկ արջերի զրույցն ու նրանց հիմարացնելը՝ մտացածին ու անիրական։

Հեքիաթի ավանդումը ճիշտ տանելու համար ուսուցիչն ամենից առաջ իր համար պետք է պարզի, թե որոնք են նրա իրական և երևակայական կողմերը, ինչ փոխհարաբերության մեջ են դրանք և ինչ են սովորեցնում աշակերտներին, ինչու է ժողովուրդը դիմել հարցի հեքիաթային լուծմանը, որն է հեքիաթի իրական հիմքը և այլն։ Միայն այս դեպքում է, որ նա հնարավորություն կունենա մանրամասնորեն վերլուծելու հեքիաթը, վերլուծելու նրա միտքը,

գտնելու համանման այլ հեքիաթներ ու առակներ, որպեսզի հնարավոր լինի հեքիաթի մեկնաբանումը հեշտացնել ու հասցնել սովորողների գիտակցությանը։

Յուրաքանչյուր հեքիաթի ավանդումը պետք է ավարտվի նրա բարոյախրատական կամ դաստիարակչական եզրակացության բացահայտմամբ, որը այս տիպի նյութերի ուսումնասիրության ամենահիմնական և առանձնահատուկ կողմերից մեկն է։ Աշակերտները պետք է քաջ գիտակցեն, որ «Երեք հարուստը» հեքիաթում (2-րդ դասարան) ամենահարուստը նա չէ, ով շատ փող, ոսկի, արծաթ կամ իշխանություն ունի, այլ նա, ով շատ բան գիտի, քանի որ մնացած հարստությունները կարող են հեշտությամբ գողանալ, իսկ գլխում եղածը՝ ոչ։ «Արագիլն ու սագը» հեքիաթի (2-րդ դասարան) սագի նման չպետք է լինել, քանի որ նա ամբողջ օրը գովում էր ինքն իրեն, շատ պարծենկոտ էր, և պետք է գիտակցեն, որ ավելի լավ է մի բան լավ իմանաս, քան շատ բաներից՝ քիչ-քիչ և այլն։ Իսկ այս ամենի իմանալը թե՛ կրթական և թե՛ դաստիարակչական տեսակետից չափազանց օգտակար է։

Հեքիաթի ուսուցման ամենավերջին փուլը դրանք համապատասխան առածների ու ասացվածքների հետ կապելն է։ Երբ հեքիաթի բովանդակությունը սովորողների համար արդեն պարզ է դառնում, դրանից հետո հեքիաթում արտահայտված հիմնական գաղափարներն արտահայտող առածներ, ասացվածքներ ու հանելուկներ գտնելն առանձնապես դժվարություն չեն ներկայացնում։ Այսպես, օրինակ՝ «Արագիլն ու սագը» հեքիաթն ուսումնասիրելուց հետո որպես ամփոփում սովորողները գտնում են «Դու քեզ մի գովիր, թող ուրիշը գովի» ասացվածքը և ցույց տալիս, որ այն լիովին արտահայտում է այդ հեքիաթի հիմնական միտքը։

Այսպիսով՝ հեքիաթների ուսումնասիրությունը տարրական դասարաններում կարելի է անցկացնել հետևյալ սխեմայով.

- նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ,
- հեքիաթի ամբողջական ընթերցում,
- հեքիաթի ընթերցում մտքում (աշակերտների կողմից),
- բարձրաձայն ընթերցանություն (կարդում են աշակերտները)՝ մեկնաբանություններով,
- բառային աշխատանք,

- բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողությունների ձևավորման նպատակով,
- աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- պատմելու նախապատրաստում, պատմում,
- ամփոփում։

Վերլուծություն

Դասարանում ուսումնասիրված կամ սովորողների պատմած յուրաքանչյուր հեքիաթի շուրջ տրված բացատրություններն ու մեկնաբանությունները հնարավորություն են տալիս նրանցից տրամաբանական կամ բարոյախրատական որոշակի հետևություններ անելու՝ այդ աշխատանքում ներգրավելով դասարանի բոլոր աշակերտներին՝ ինքնուրույն մտածելու, խորհելու և փաստերը կշռադատելու: Սակայն այդ բացատրություններն ու մեկնաբանությունները յուրաքանչյուր դասարանում տարբեր պետք է լինեն:

Հեքիաթը զարգացնում է միջառարկայական կապերն անգամ մաթեմատիկայի դասերին: Օրինակ՝ 7 թիվը ուսուցանելիս սովորողներին պատմեցի մի հեքիաթ, որով և՛ սովորեցրի 7թիվը և թվանշանի տեսքը, և՛ սերմանեցի սեր և հոգատարություն բնության նկատմամբ: Սովորողների 75% սկսեց խնամել ծառերը, նույնիսկ նկատողություն անել բնությունն անխնա օգտագործողներին, ինչպես նաև՝ հրաշալի մտապահեցին 7 թվի գրությունը: Սովորողների 15%ը, ճի՛շտ է, ակտիվ չէր բնության խնամքի աշխատանքներում, սակայն ակտիվ էր բնությունը չփչացնելու գործում, որին հետևում էին գրեթե բոլոր սովորողները: Նրանք, նույնպես, հրաշալի մտապահեցին 7 թիվը և թվանշանը: Հարկ եմ համարում նշել, որ 7 թվի ուսուցումն այս եղանակով հրաշալի ստացվեց: Մնացած 10%-ը ցուցաբերեց անտարբերություն դասի նկատմամբ: Ստորև ներկայացնում եմ այս վերլուծության դիագրամը:



Արժևորելով հեքիաթի դերը կրթության համակարգում՝ ինքնուրույն ընթերցանության դասաժամի ընթացքում կարդացինք և վերլուծեցինք Հովի. Թումանյանի «Ճանփորդներ» հեքիաթը , որից հետո հանձնարարեցի նկարել հեքիաթն այնպես, ինչպես իրենք պատկերացրին։ Սովորողների մեծ մասը (մոտավորապես 80%-ը) ցուցաբերեց մեծ ակտիվություն ու հետաքրքություն աշխատանքի նկատմամբ, 10%-ը ուղղակի դիմել էր մեծերի օգնությանը, իսկ մյուս 10%-ը՝ նկարել էր ուղղակի առանց վերլուծության։ Այս կերպ հեքիաթի ուսուցումը սովորողների բարոյախրատական այնպիսի կարևոր որակների ձևավորման պատճառ դարձավ, ինչպիսիք են՝ հոգատարությունը միմյանց և հարգանքը դիմացինի աշխատանքի նկատմամբ, կարծիք արտահայտելը և քննադատական մտածողությունը, ինչպես նաև՝ սովորեցրեց առողջ բանավեճ։ Ներկայացնեմ վերլուծությունս դիագրամի տեսքով։



Հեքիաթը, հանդիսանալով ինքնաճանաչման լավագույն միջոց, մեծ հնարավորություններ է տալիս ուսուցիչներին՝ իրենց աշակերտների բնավորության բազմաթիվ գծեր բացահայտելու կամ իրենց աշակերտներին ճանաչելու, ներաշխարհի մուտք գործելու համար: Դրանում համոզվեցի անավարտ հեքիաթը շարունակելու առաջադրանքի արդյունքները վերլուծելիս: Ես պարզեցի, թե սովորողներից ով է երազկոտ, գթասիրտ, առատաձեռն, ճշտապահ, խորամանկ, ագրեսիվ, ով տանը խնդիրներ ունի և այլն:

Եզրակացություն

«Հեքիաթի տեղն ու դերը տարրական կրթության համակարգում» թեմայի շուրջ կատարածս եզրակացությունները հետևյալն են.

Հեքիաթները, որոնցում առկա են չարի և բարու, արդարության և անարդարության մասին բարոյական գաղափարները, նպաստում են երեխաների մի շարք անձնային որակների ձևավորմանը, ինչպես նաև՝ արդեն ձևավորվածների համոզմանն ու զարգացմանը:

Հեքիաթը, լինելով մի լեզու, որով հնարավոր է սովորողի հետ խոսել, ինչպես ասել է Ջ. Ռոդարին, «առանց կոտրատվելու», ոչ միայն դաստիարակության միջոց է, այլ նաև թույլ է տալիս բացահայտել անձի ներքին հնարավորությունները և զարգացնել դրանք, ինչպես նաև հանդիսանում է ուսուցման արդյունավետ միջոց: Հեքիաթից սովորողը իրեն դեռևս անծանոթ իրականության, ապագայի բնավորության գծերի մասին տեղեկություններ է ստանում:

Իմ սաների հետ անցկացրածս ուսումնասիրություններից հասկացա, որ սովորողների համար հեքիաթը խաղի պես լուրջ ու իսկական գործ է: Դա նրան պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու և գնահատելու համար:

Հեքիաթը, մասնավորապես հոգեբանական հեքիաթը, դաստիարակության և անձնային որակների ձևավորման ու զարգացման լավագույն միջոց է այնքանով, որ այն «կարելի է»-ի, «չի կարելի»-ի անփոխարինելի տարբերակներից է: Այսինքն, երբ երեխային ասում են այսինչ բանը կարելի է կամ այսինչ բանը չի կարելի, միշտ հետևում է «ինչու՞»-ն, իսկ հեքիաթում երեխայի «ինչու՞»-ն նույնպես մեկնաբանվում է «ինչու՞»-ի պատասխանը հերոսի կերպարով կամ հերոսի գործողությամբ մատուցվում է նրանց, կարծում եմ, միայն հեքիաթներում:

Հեքիաթը սովորողներին հնարավորություն է տալիս ինքնուրույն դատողություններ անել, տարբերել լավն ու վատը, սուտն ու կեղծը, բարին ու չարը, և գտնել դրանց պատճառահետևանքային կապերը: Այն իմ սաներին դարձրել է ընկերասեր, բարեգութ, միմյանց նկատմամբ հոգատար, և ինչու՞ չէ՝ աշխատասեր ու հարգալից:

Հեքիաթը իր ուրույն դերն ունի նաև ուսուցման մեջ: Այն նպաստում է խոսքի զարգացմանը, ՛ներքին հնարավորությունների բացահայտմանը, քանի որ սովորողներն ունենում են երևակայության ազատ արձակման հնարավորություն: Այն նպաստում է երևակայական և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Հեքիաթը զարգացնում է նաև միջառարկայական կապերը, քանի որ սովորողները չեն բավարարվում միայն հեքիաթ կարդալով ու լսելով, այլ պահանջում են դրա կերպարանավորում, նկարազարդում, որոնց շուրջ կարելի է աշխատել կերպարվեստի, տեխնոլոգիայի դասերին՝ օրինակ՝ ծեփով, խմորով, երաժշտության դասերին՝ երաժշտության ներքո, որի ժամանակ, ինչպես համոզվել ենք, արդյունքներն ավելի շոշափելի և տարբեր են լինում, անգամ մաթեմատիկայի դասերին:

Օգտագործած գրականություն

1. Ի. Վաչկով «Հեքիաթաթերապիա. Ինքնագիտակցության զարգացումը հոգեբանական հեքիաթի միջոցով», Մոսկվա, 2001
2. Ա. Դալլաքյան «Ժողովրդական հեքիաթների ուսուցման արդյունավետությունը», Նախաշավիղ 1-2, 2004
3. Ա. Տեր Գրիգորյան «Հեքիաթների դասավանդումը տարրական դասարաններում», 1968թ. N34 «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում»
4. Ջ. Գյուլամիրյան «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան, Զանգակ-97, 2006
5. Ա. Գալստրան, Ռ. Խարազյան, Ա. Բալայան «Հայոց լեզվի հարցարանների ժողովածու», Երևան, 2008
6. Համացանց